ԿԱՐԾԻՔ

Նարեկ Գանձափարի Սարատիկյանի «Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում» *թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:*

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից տնտեսական համակարգում ինովացիաները հանդիսանում են տնտեսական աճի, արտադրողականության բարձրացման և մրցունակության ապահովման հիմնական գործոններից մեկը: Գիտատեխնոլոգիական առաջընթացը, թվայնացումը և նորարարական լուծումները էականորեն փոխում են արտադրության, ծառայությունների և կառավարման ավանդական մոդելները՝ նպաստելով գիտելիքահենք տնտեսության ձևավորմանը և զարգացմանը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մրցունակ և արդյունավետ տնտեսության զարգացումը էականորեն կախված է ինովացիոն ակտիվությունից և գիտելիքի ստեղծման ու տարածման արդյունավետությունից:

Միևնույն ժամանակ, տնտեսական զարգացումն ունի արտահայտված տարածքային բնույթ և կենտրոնացվածության բարձր մակարդակ: Տնտեսական գործունեության, մարդկային կապիտալի և ինովացիոն ռեսուրսների կենտրոնացումը որոշակի տարածքներում հանգեցնում է տարածքային անհամաչափությունների խորացման՝ ինչպես երկրների ներսում, այնպես էլ միջազգային մակարդակում: Շատ տարածքներ բախվում են ցածր տնտեսական ակտիվության, մարդկային ռեսուրսների արտահոսքի և ինովացիոն ներուժի թերզարգացման խնդիրներին, ինչը սահմանափակում է դրանց զարգացման հնարավորությունները և խորացնում սոցիալ–տնտեսական տարբերությունները:

Այս պայմաններում առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում ինովացիաների և տարածքային տնտեսության փոխկապակցված զարգացումը: Հաշվի առնելով վերոնշյալը ատենախոսության շրջանակներում տարածքային ինովացիոն համակարգերը դիտարկվել են որպես այն հայեցակարգային և գործնական շրջանակը, որի միջոցով հնարավոր է կազմակերպել գիտության, կրթության, մասնավոր և պետական հատվածի արդյունավետ փոխհամագործակցությունը տարածքային մակարդակում՝ ապահովելով կայուն և ակտիվ տնտեսական միջավայր: Տարածքային ինովացիոն համակարգերի ձևավորումը թույլ է տալիս ոչ միայն խթանել ինովացիոն գործունեությունը, այլև ուղղորդել այն դեպի տարածքային համաչափ և ներառական տնտեսական զարգացում:

Միջազգային փորձը վկայում է, որ տարածքային ինովացիոն համակարգերի զարգացումը հանդիսանում է առաջատար տնտեսությունների մրցունակության բարձրացման առանցքային գործոններից մեկը: Եվրոպական միության երկրներում, ԱՄՆ-ում և Ասիայի մի շարք զարգացած տնտեսություններում տարածքային ինովացիոն համակարգերը նպաստել են բարձր տեխնոլոգիական ճյուղերի ձևավորմանը, աշխատատեղերի ստեղծմանը և տնտեսական մրցակցության ամրապնդմանը: Տարածքային ինովացիոն համակարգերի կիրառումը հնարավորություն է տալիս

առավել արդյունավետ օգտագործել տեղական ներուժը, նվազեցնել տարածքային անհավասարությունները և ապահովել տնտեսության կայուն ու երկարաժամկետ զարգացում:

Այսպիսով, ինովացիաների դերի և տարածքային տնտեսության առանձնահատկությունների համատեղ դիտարկումը, ինչպես նաև տարածքային ինովացիոն համակարգերի ձևավորման և զարգացման խնդիրների ուսումնասիրությունը հանդիսանում են ժամանակակից տնտեսագիտության և տնտեսական քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը, ինչը պայմանավորում է ներկայացված ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտության թեմայի արդիականությունը և կարևորությունը պայմանավորվում է նաև Կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագրով, որտեղ զգալի նշանակություն ունեն երկրի սոցիալ-տնտեսական խնդիրները, մարդկային կապիտալի զարգացումը, տարածքային տնտեսության և գիտելիքահենք տնտեսության զարգացման գործոնները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ, ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակները և խնդիրները, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպված են ստացված գիտական արդյունքները և նորույթը, ինչպես նաև դրանց գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության նպատակն է վերլուծել ՀՀ տարածքային ինովացիոն համակարգերի ձևավորման, զարգացման և կառավարման հիմնական ուղղությունները՝ հիմնվելով միջազգային փորձի, ՀՀ տնտեսության զարգացման արդի միտումների և տարածքային քաղաքականության առանձնահատկությունների վրա:

Սահմանված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծել և ընդհանրացնել ՏԻՀ-ի զարգացման տեսական և մեթոդաբանական հիմքերը,
- ուսումնասիրել միջազգային փորձը՝ ՏԻՀ-ի կառավարման մոդելների համեմատական վերլուծության միջոցով,
- բացահայտել ՀՀ-ում ՏԻՀ-ի ձևավորման հիմնական խոչընդոտներն ու զարգացման գործոնները,
- մշակել և հիմնավորել ՏԻՀ-ի զարգացման ու կառավարման նոր մոտեցումներ՝ հիմնվելով կատարողականի առանցքային ցուցիչների վրա,
- առաջարկել ՏԻՀ զարգացման հնարավորությունների գնահատման համընդհանուր ցուցիչ՝ հիմնված տարածքային ինովացիաների իրականացման ռեսուրսային հնարավորությունների, ինչպես նաև կազմակերպչահիրավական գործոնների վրա:

Հետազոտության առարկան ՀՀ տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման շրջանակն է, իսկ օբյեկտը՝ տարածքային ինովացիոն համակարգի զարգացման ու կառավարման առանձնահատկությունները ՀՀ-ում:

Ատենախոսության առաջին՝ «Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման սոցիալ-տնտեսական նախադրյալները» գլխում ներկայացվել են տարածքային ինովացիոն համակարգի

(ՏԻՀ) տեսական և մեթոդաբանական հիմքերը: Ուսումնասիրվել է ինովացիայի դերը ժամանակակից գիտելիքահենք տնտեսության մեջ, ուսումնասիրվել և ներկայացվել է ՏԻՀ ձևավորման և զարգացման առանցքային գործոններ: Պարզաբանվել է ինովացիոն ներուժի հայեցակարգը և նրա բաղադրիչները, որոնք ազդեցություն են թողնում ինովացիոն համակարգի ձևավորման վրա:

Ատենախոսի կողմից մշակվել և ներկայացվել է ՏԻՀ-ի սահմանումը՝ որպես ինստիտուցիոնալ ցանց, որը միավորում է պետական, գիտակրթական և մասնավոր հատվածները: Բնութագրվել են ՏԻՀ-ի առանձնահատկությունները, ընդգծվել նրա սոցիալ-տնտեսական նշանակությունը տարածքային զարգացման, արտագաղթի կրճատման և մարդկային կապիտալի զարգացման համատեքստում: Վերլուծվել են գրականության մեջ առկա ՏԻՀ-ի տարբեր սահմանումներ և դրանց հիման վրա մշակվել է ատենախոսության հետագա տրամաբանական կառուցվածքը:

Հետազոտության մեջ կարևորվել է ՏԻՀ գնահատման մեթոդաբանությունը: Ատենախոսի կողմից ներկայացվել և հիմնավորվել է ՏԻՀ գնահատման բազմագործոն մոդելը: Ավանդական արտադրական ֆունկցիան ընդլայնվել է՝ ներառելով գիտահետազոտական ներդրումները, մարդկային կապիտալը, ինովացիոն ենթակառուցվածքները, պետական աջակցությունը և տեխնոլոգիական գործոնները: Մոդելում ներառվել է նաև պատահական գործոն՝ շուկայական անորոշությունների և արտաքին ազդեցությունների հաշվառման համար: Այս մոտեցումը թույլ է տալիս համապարփակ վերլուծել ՏԻՀ-ի զարգացման ներուժը և հիմք հանդիսանալ հետագա կառավարչական որոշումների համար: Առաջին գլուխը տեսական հիմք է ստեղծել առաջադրված խնդիրներ և նպատակների ձևավորման և հետազոտման համար:

Ատենախոսության երկրորդ՝ **«Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում»** գլխում ուսումնասիրվել և ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման տեսական ու մեթոդաբանական հիմքեր: Վերլուծվել են ինովացիաների դերը ժամանակակից գիտելիքահենք տնտեսության մեջ, բացահայտվել են տարածքային ինովացիոն համակարգերի ձևավորման առանցքային գործոնները: Ատենախոսը կարևորելով ՀՀ տնտեսության ներկայիս իրավիճակը, այն կապելով զարգացման գործընթացի հետ, իրականացրել տնտեսության ինովացիոն գործոնների ուսումնասիրություն և վերլուծություն: Ուսումնասիրելով միջազգգային փորձը, ինչպես նաև մի շարք կազմակերպությունների կողմից մշակված մեթոդաբանությունները, առանձնացվել են մի խումբ գործոններ որոնք էականորեն նպաստում են ՏԻՀ ձևավորման վրա: Առանձնված գործոնների մասով իրականացվել է համակողմանի և խորացված ուսումնասիրություններ, որոնց վերլուծական ամփոփումը ներկայացվել է ատենախոսության մեջ: Իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն, նպատակ ունենալով ներկայացնելո ՏԻՀ ձևավորման և զարգացման վրա էական ազդեցություն թողնող գործոններ, բացահայտելու այն գործոնը կամ գործոնները, որոնց մասով պետք մշակվեն և իրականացվեն որոշակի քայլեր:

Հաշվի առնելով թեմային առնչվող հետազոտությունների և տվյալների անբավարար լինելը, հետազոտության շրջանակում իրականացվել է հարցում, որը ամփոփ ձևով ներկայացվել է ատենախության մեջ:

Իրականացված աշխատանքը հիմք են հադիսացել աշխատության հետագա մեթոդաբանական և կիրառական առաջարկությունների համար:

Ատենախոսության երրորդ՝ **«Տարածքային ինովացիոն համակարգի կառավարման բարելավման ուղիները ՀՀ-ում»** գլխում ներկայացվել է ՀՀ-ում ՏԻՀ զարգացման և կառավարման կոնկրետ մեխանիզմներ ու ռազմավարություն: Հիմնվելով առաջին գլխի տեսական հիմքերի և երկրորդ գլխի համեմատական ու բազմակողմանի վերլուծության վրա՝ առաջարկում է գործնական քաղաքականության ուղեցույցներ, ինստիտուցիոնալ լուծումներ և գնահատման գործիքներ:

Հիմնավորվում է Հայաստանում ՏԻՀ ռազմավարական կառավարման անհրաժեշտությունը: Հաշվի առնելով, որ ինովացիոն գործընթացների բարդությունն ու անորոշությունները պահանջում են ոչ թե կենտրոնացված, կոշտ պլանավորում, այլ ճկուն և տարածաշրջանային առանձնահատկություններին հարմարված կառավարման մոդել, ներկայացվելէ կառավարման սեփական մոդելը:

Առաջարկվում է ՏԻՀ կառավարման ինստիտուցիոնալ շրջանակի մոդել, որը հիմնված է եռակի պարուհի (Triple Helix) հայեցակարգի վրա՝ պետություն, գիտակրթական հատված և մասնավոր հատված ակտիվ համագործակցություն:

Որպես կառավարման կարևոր բաղադրիչ՝ առաջարկվում է ՏԻՀ կառավարման համակարգ՝ կատարողականի առանցքային ցուցիչներով (KPI): Այս համակարգը հիմնված է ատենախոսության մեջ մշակված բազմագործոն մոդելի վրա և ներառում է չափանիշների երկու խումբ:

Աշխատանքը ամփոփվում է ՏԻՀ զարգացման համար առաջարկվող միջամտությունների ռազմավարական ծրագրի շրջանակային նկարագրությամբ: Այն ներառում է կարճաժամկետ (օրենսդրական և ինստիտուցիոնալ բարելավումներ), միջնաժամկետ (մարզային կենտրոնների և պիլոտ կլաստերների ստեղծում) և երկարաժամկետ (ամբողջական ՏԻՀ էկոհամակարգի ձևավորում և ինտեգրում համաշխարհային շղթաներում) միջոցառումների հստակ հաջորդականություն: Հեղինակը ընդգծում է, որ հաջողության հիմքը համակարգվածության, շարունակականության և բոլոր շահառուների ակտիվ մասնակցության սկզբունքներին հետևելն է, ինչը կվերածի առկա մասնատված ջանքերը կայուն տարածքային զարգացման շարժիչ ուժի:

Ատենախոսության **եզրակացություններում** ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, ինչպես նաև կատարվել են առաջարկություններ՝ ուղղված ՀՀ տարածքային ինովացիոն համակարգի արդյունավետության և որակի բարելավմանը:

Ատենախոսության **գիտական նորույթը** ՀՀ տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման, զարգացման և կառավարման ուղղությամբ նոր մոտեցումների մշակումն է, որն արտահայտվում է հետևյալ դրույթներով.

- առաջարկվել է ՏԻՀ-ի կառավարման ինստիտուցիոնալ մոտեցում, հաշվի առնելով տարածաշրջանային ինովացիոն ենթակառուցվածքների ձևավորման միջազգային առաջավոր փորձը, պետական և մասնավոր հատվածի ներդաշնակ համագործակցությունը, ինչպես նաև տարածքային ինովացիոն գործունեության խթանման նպատակով պետական արդյունավետ քաղաքականության միջամտությունը:
- ՏԻՀ զարգացման գնահատման համար մշակվել է Տարածքային ինովացիոն ներուժի բազմաչափ գնահատման ընդլայնված մոդել, որը տնտեսավարման ավանդական գործոններից բացի (աշխատուժ, կապիտալ) ներառում է ՏԻՀ-ի առանցքային բաղադրիչներ՝

գիտահետազոտական ներդրումներ, մարդկային կապիտալ, ինովացիոն ենթակառուցվածքներ, պետական աջակցություն և տեխնոլոգիական առաջընթաց, հնարավորություն ընձեռելով հիմնավորելու տարածքային ինովացիոն ռազմավարական կառավարման նպատակահարմարությունը:

- մշակվել է ՏԻՀ զարգացման հնարավորությունների համընդհանուր ցուցիչ, հիմնված տարածքային ինովացիաների իրականացման ռեսուրսային հնարավորությունների, ինչպես նաև կազմակերպչահիրավական գործոնների վրա, գնահատելու համար կառավարչական գործառույթների ընթացքը տարածքային ինովացիաների գեներացման, ներդրման կազմակերպման ու վերահսկողության, ինչպես նաև սպառման խթանման շղթայում:
- առաջարկվել է տարածքային ինովացիոն համակարգի կառավարման նոր մոդել՝ կատարողականի առանցքային ցուցիչներով, որը հնարավորություն է ընձեռում մի կողմից ապահովելու ՏԻՀ-ի գործունեության աջակցող գործառույթների արդյունքային պարբերական չափելիություն, մյուս կողմից, դրա հիման վրա կայացնելու տարածքային ինովացիոն գործունեության առաջընթացին նպաստող համապատասխան կառավարչական որոշումներ:

Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքները, ներկայացված մեթոդական մոտեցումները, կատարված առաջարկությունները և եզրակացությունները կարող են օգտագործվել ՀՀ մակրոտնտեսական քաղաքականության մշակման, տնտեսության ինովացիոն հատվածի զարգացման գերակայությունների որոշման և այդ ոլորտի իրավական կարգավորման, գիտակրթական քաղաքականության բարելավման, տարածքային զարգացման, համատեքստում ինովացիոն համակարգի ձևավորման և կառավարման նպատակով:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Աշխատանքը, կառուցվածքային առումով անհարթ է.
   - ✓ 2-րդ գլուխը վերնագրված է «Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում», սակայն գլխի 2 ենթահարցերից 1-ինը վերաբերում է տարածքային ինովացիոն համակարգերի միջազգային փորձի ուսումնասիրությանը: Այս ենթահարցը թե՛ կառուցվածքի, և թե՛ տրամաբանության առումով ճիշտ կլիներ քննարկել առաջին գլխում:
   - ✓ 2.2 բաժնում քննարկվում է ՏԻՀ-ի ձևավորման մարտահրավերներն ու առանձնահատկությունները, որի շրջանակներում արձանագրվում են բազմաթիվ խնդիրներ, որոնք խոչընդոտում են ՏԻՀ-երի ձևավորումը Հայաստանի Հանրապետությունում: Դրանից հետո 3.1 բաժնում ներկայացվում է ՏԻՀ-երի ռազմավարական կառավարման հնարավորությունները ՀՀ-ում (եթե մի բան դեռևս ձևավորված չէ, ինչ ռազմավարական կառավարման մասին կարող է խոսք լինել): Հետո 3.2-ում նորից վերադառնում ենք ՏԻՀ-երի ձևավորման ու զարգացման կառավարչական որոշումներին՝ նշելով, թե ինչ է պետք անել ՏԻՀ-երի ձևավորման համար: Եթե վերանանք նշված բաժինների բովանդակությունից և դիտարկենք միայն

վերնագրերի մակարդակում, ապա տրամաբանական կլիներ նախ վերլուծել ՏԻՀ-երի առկա վիճակն ու կայացման մակարդակը ՀՀ:-ում, որից հետո նախանշել դրանց զարգացման հնարավորություններն ու հեռանկարները, որից հետո դրանք կարելի էր դիտարկել ռազմավարական կառավարման հնարավարությունների տեսանկյունից:

- ✓ Աշխատանքի 2-րդ և 3-րդ գլուխները գերհագեցած են ՏԻՀ-երի ձևավորմանը նպաստող գործոնների, դրանց արդյունավետությունը պայմանավորող գործոնների, ՏԻՀ-երի առանձնահատկությունների և նմանատիպ այլ տեսական հարցերով (իրենց երկար թվարկումներով): Այդ տեսական հարցերն առավելապես 1-ին՝ տեսամեթոդաբանական գլխի հարցեր են:

2. Աշխատանքը ընդգծված նկարագրական է, իսկ վերլուծական ապարատը՝ թույլ: 2.2 բաժինը վերնագրից դատելով ենթադրում էր խորքային վերլուծություններ, պարզելու ՀՀ մարզերն, առհասարակ, ունեն ՏԻՀ-երի ձևավորման ներուժ, թե ոչ: Այս դեպքում մարզերը կտարբերակվեին ավելի մեծ, կամ փոքր ներուժ ունեցողների և դրանց նկատմամբ արդեն թե՛ կառավարչական որոշումների շրջանակը, և թե՛ ռազմավարական կառավարումը, պետք է տարբեր լինեին: Մինչ դեռ նյութը շարադրված է ընդհանրական, պետք է սա արվի, նա արվի, ... ոճով, իսկ ՏԻՀ-երի ձևավորման մարտահրավերները նկարագրված են ենթադրությունների մակարդակով, բացակայում են հիմնավորումները:
3. Աշխատանքի 2.2 բաժնում ներկայացվում է 2005թ. ընդունված «ՀՀ ինովացիոն գործունեության հայեցակարգը» և 2006թ. ընդունված «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը: Առանց քննարկելու նշված հայեցակարգի և օրենքի խնդիրները, լավ ու վատ կողմերը արձանագրվում է (էջ 60), որ ՀՀ-ում անհրաժեշտ է նոր ռազմավարություն, որը կներառի ՏԻՀ-երի զարգացման բոլոր բաղադրիչները: Նման առաջարկի համար առնվազն պետք էր քննարկել գործող ակտերի թերություններն ու բացերը, որոնց հիման վրա առաջարկել նորը:
4. Աշխատանքում անթիվ են հայտնի և դեկլարատիվ մտքերը.
   - ✓ պետք է օժանդակել SS ընկերություններին պատվերներ ստանալու գործում,
   - ✓ պետք է հատուկ ուշադրություն դարձնել նորաստեղծ ընկերություններին,
   - ✓ պետք է իրավակարգավորումներով խրախուսել մարզերում իրականացվող ինովացիոն գործունեությունը
   - ✓ պետք է մեծացնել գիտահետազոտական ինստիտուտների ֆինանսավորումը,
   - ✓ պետք է բարձրացնել գիտական աշխատանքների առևտրայնացման մակարդակը,
   - ✓ պետք խթանել ստարտափերի զարգացում,
   - ✓ պետք է ...

   Բաց է մանում ամենակարևոր հարցը՝ ինչպես:

5. 3.1 բաժնում ներկայացված ա տարածքային ինովացիոն ներուժի բազմաչափ գնահատման (ՏԻԳ) մոդել, որտեղ արդյունքը (ՀՆԱ) գծային ֆունկցիայի տեսքով ներկայացվում է կապիտալից (K), աշխատանքից (L), որակավորված աշխատուժից (H), գիտահետազոտական գործունեության ներդրումային գործակցից (R), ինովացիոն ենթակառուցվածքների գործակցից (I), պետական աջակցության գործակցից (P) և տեխնոլոգիական գործոնից (T): Եթե անտեսենք, որ մոդելի մաթապարատը նկարագրված չէ, մասնավորապես, թե ինչ տրամաբանություն է դրված մոդելի հիմքում և գործոնների գործակիցներն ինչպես են ստացվել, այնուամենայնիվ անհասկանալի է մնում, թե գծային ֆունկցիայի տեսքով ներկայացված մոդելը ինչպես է գնահատում տարածքային ինովացիոն ներուժը, եթե ֆունկցիայի կախյալ փոփոխականը ՀՆԱ-ն է, որն էլ չի մեկնաբանվում, խոսքը մարզային ՀՆԱ-ի, թե երկրի ՀՆԱ-ի մասին է:

6. 3.3 բաժնում բերված են կատարողական առանցքային ցուցիչներ (KPI), որով նախատեսվում է գնահատել ՏԻՀ-երի գործունեությունը: Նախ, ներկայացվածը ՏԻՀ-երի գործունեության հետ կապված ցուցանիշներ են, որոնք նկարագրում են ՏԻՀ-երի հետ կապված միջոցառումներ (ֆինանսական, ոչ ֆինանսական, իրավական և կազմակերպչական), դրանց փաստացի կատարումն ու գնահատում դրանց կատարողականը: Երկրորդ, ներկայացված միջոցառումների կատարողականների միջինացումն ու հանրագումարային ցուցանիշը որևէ կերպ չի կարող վկայել կամ գնահատել ՏԻՀ-երի զարգացումը, քանի որ այն ցույց է տալիս ընդամենը, թե նախատեսված միջոցառումները ինչ ծավալով են կատարվել, որը ՏԻՀ-երի զարգացման վկայություն չէ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այնուհանդերձ, նշված դիտողությունները չեն նվազեցնում հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը: Նարեկ Գանձափարի Սարատիկյանի թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է, որում դրված նպատակը և խնդիրների լուծումը համարվում են արդիական: Հետազոտության հիմնական արդյունքները հրատարակվել են հեղինակի գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները: Հետազոտության վերջնարդյունքներն ունեն տեսական և գործնական նշանակություն՝ կիրառական հնարավորություններով:

Նարեկ Գանձափարի Սարատիկյանի «Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲԿԴԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը Ը 00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս

Թաթուլ Մելսիկի Մկրտչյան
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թաթուլ Մկրտչյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Նաիրա Դարբինյան
ՀՊՏՀ գիտական խորհրդի քարտուղար

30.01.